

ԶՕՐ. ԼԱԿՈՒՏ ԹԱՐԷ ԱԶԻԶԻ ՇԵՏ ԲՆՆԱՐԿԵՑ ԻՐԱՔԸ ԵՒ ՇՐՋԱՆԸ ՅՈՒԶՈՂ ՎԱՐՅԵՐ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լախուտ երեկ հաւաստեց, որ Իրաքի դէմ ուղղուած ամերիկեան սպառնալիքներուն պետք է դիմադրել համաարաբական միացեալ կեցուածքով, պայմանաւ որ այդ կեցուածքը յարմարի Պէյրութի մէջ կայացած Արաբական Լիգայի վեհաժողովին տուած որոշումներուն, այսինքն՝ արաբական որեւէ երկրի դէմ յարձակում մը կը նկատուի արաբական աշխարհին դէմ յարձակում:

Նախագահ Լախուտ այս յայտարարութիւնները կատարեց երեկ, երբ Պաապտայի մէջ ընդունեց Իրաքի փոխ վարչապետ Թարեք Ալի-Վը:

Նախագահ Լախուտ յայտնեց, որ Իրաքի կողմէ համաձայնութիւնը կամ արտօնութիւնը, որ վէնքի միջապային քննիչները վերադառնան Իրաք ապացոյց է, որ Իրաք կը գործադրէ միջապային որոշումները, սակայն Իրաքի նշեալ կեցուածքը չնկատուեցաւ դրական կեցուածք, ինչ որ մեծ հարցականներ կը ստեղծէ շրջանին մէջ նպատակադրուած արաբական դիմադրութեան ուժը տկարացնելու ծրագրի մը մասին: Ան նաեւ պզուտացուց, որ Իրաքը ունենալով պարագային տեղի ունենալիք հակապոզիցիոնները պիտի ապրեն ամբողջ աշխարհի ապահովութեան եւ կայունութեան:

Նախագահ Լախուտ նկատել տուաւ, որ Եւրոպական երկիրները, ինչպէս նաեւ Ռուսիան եւ Չինաստանը հրաւիրուած են կեցուածք ձեռնարկել ՄԱԿի վերջնական դերին մասին, որովհետեւ ան իր չէպոք դերը կամ իրմէ իսկ բխած որոշումներու գործադրութեան մէջ խախտումներ արձանագրած է:

Նախագահ Լախուտ շեշտեց Իրաքի ժողովուրդի տանջանքներուն վերջ մը դնելու անհրաժեշտութիւնը՝ նշելով, որ անոր շուրջ պաշարումը քակելը բաւարար չէ, այլ հարկ է վայել յարգել իբրեւ ժողովուրդի եւ արտօնել, որ գոյատեւեց արժանապատուութեամբ, կայունութեամբ եւ ապահովութեամբ:

Իր կարգին, Ալի Վը շեշտեց, որ Իրաք ունի կամքը դիմադրելու ամերիկեան որեւէ յարձակումի, որովհետեւ կը հաւատայ, որ կամքը վէնքէն պարտուի է, ինչպէս եկաւ փաստելու լիբանոսացի իբրեւ իրապարհի համար:

ՃԻՍԻ ՔԱՐԹՐ՝ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՆՈՂԷԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ



ՕՍԼՕ, 11 (ՌՈՅԹԸՐԸ).- Մ. Նահանգներու նախկին նախագահ Ճիմի Քարթըր Ուրբաթ օր խաղաղութեան Նոպելեան 2002ի մրցանակակիր դարձաւ, ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւունքներու ի խնդիր իր տարած պայքարին համար:

Դեմոկրատ Քարթըր, որ 1977էն 1981 Միացեալ Նահանգներու նախագահն էր, 156 թեկնածուներու մէջէն ընտրուած է եւ շահած մէկ միլիոն տոյար մրցանակը:

Նախագահ Քարթըրը (78 տարեկան) տասնամեակներու անոր ճիգերուն համար՝ «միջապային տագնապներու խաղաղ լուծումներ գտնելու, ժողովրդավարութիւն եւ մարդկային իրաւունքներ քաջալերելու եւ տնտեսական ու ընկերային բարգաւաճումի թափ տալու նպատակով»:

«Պիտի շարունակեմ խօսիլ խաղաղութեան եւ մարդկային իրաւունքներու մասին չարչարանքներու մէջ, որ «ողբերգական սիւալ մը» պիտի ըլլայ Մ. Նահանգներու համար՝ Իրաքը հարուածել, առանց ՄԱԿի պարակցութեան»:

Քարթըր յայտնած է, որ «ողբերգական սիւալ մը» պիտի ըլլայ Մ. Նահանգներու համար՝ Իրաքը հարուածել, առանց ՄԱԿի պարակցութեան:



Զօր. Լախուտ կ'ընդունի Թարեք Ազիզը

նանեան դիմադրութիւնը: Ալի Վը յայտնեց նաեւ, որ նման պարագայի կարեւորագոյն հարցը գոյատեւումն է ու անխոնջ պայքարը դիմադրելու հարուածին, որ ուղղուած է ոչ միայն Իրաքի, այլ արաբական աշխարհին: Ան շեշտեց անհրաժեշտութիւնը՝ Լիբանան - Սուրիա - Իրաք եռակողմանի գործակցութեան, որովհետեւ այդ գործակցութիւնը անպայման պիտի ունենայ իր դրական արդիւնքները:

«Միացեալ Նահանգներ եւ սինակասներ պետք է հասկնան, որ պիտի չլանձնուին իբրեւ երկիրուած ժողովուրդ, այլ մեր պայքարին պարտականութեամբ պիտի պայքարինք պաշտպանելու մեր հայրենիքը, պատիւը, անկախութիւնն ու պայքարին շահերը», նշեց ան:

Հանդիպումին Ալի Վը նախագահ Լախուտի փոխանցեց Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնի նամակը, որուն մէջ յիշուած է շրջանա-

Շար-ը՝ էջ 10

ԵԼՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի հրաւերով վեցօրեայ այցելութեան մը համար այսօր Հայաստան պիտի հասնի Ռուսիոյ նախկին նախագահ Պորիս Ելցին իր կնոջ հետ:

Պորիս Ելցին այսօր պիտի այցելէ Ծիծեռնակաբերդ եւ ծաղկեպսակ պիտի վետեղէ Հայկական Յեղասպանութեան կոհերու յուշակոթողին: Ելցին նաեւ պիտի մասնակցի Երեւան - Էրեբունի տօնակատարութեան միջոցառումներուն:

Վեցօրեայ այցելութեան ընթացքին Պորիս Ելցին պիտի այցելէ Հայաստանի պատմամշակութային բազմաթիւ տեսարժան վայրեր, եւ պիտի հիւրընկալուի Հայաստանի նախագահին Սեւանի նստավայրին մէջ:

ԻՐԱԿԻ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿԵԼՈՒ ԶԱՍԱՐ

ՔՈՆԿՐԵՍԷՆ ԿԱՆԱԶ ԼՈՅՍ՝ ԾՈՐՃ ՊՈՒՇԻ

Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ Երէկ Քոնկրէսէն կանաչ լոյս ապահովեց՝ Իրաքի դէմ անհրաժեշտ պարագային պատերազմ մղելու համար:

Այս «յաղթանակը» Պուշի առիթ կու տայ իր ուշադրութիւնը դարձնելու ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին մէջ գորակցութիւն ձեռք ձգելու վրայ:

Դեմոկրատներու գլխաւորութեամբ Ծերակոյնի քուէարկութեան հետք, Պուշ դարձեալ կրկնած է, թէ Սատտամ Հիւսէյն եւ «անոր ապօրինի վարչակարգը մեծ սպառնալիք են շրջանին, աշխարհին եւ Մ. Նահանգներու: Անգործութիւնը ընտրանք չէ, ապազինումը անհրաժեշտ է», րսած է:

Հանրապետականներու գլխաւորութեամբ Տերկայացուցիչներու Տունը Հինգշաբթի օր Իրաքի գծով բանաձեւեր վաւերացուցած էր 133ի դէմ 296 քուէներով: Ծերակոյնը գայն որդե-



Փութին եւ Պլէր

գրած է 23ի դէմ 77 քուէներով:

Դեմոկրատները տարակարծիք են Իրաքի հարցով: Անոնց մէկ քանին կ'ըսէ, թէ բանաձեւերը կը ստեղծէ կանխարգելիչ միակողմանի յարձակումներու, թէ Պուշ

Տունը Հինգշաբթի օր Իրաքի գծով բանաձեւեր վաւերացուցած էր 133ի դէմ 296 քուէներով: Ծերակոյնը գայն որդե-

կան խմբակներ բնաջնջելու աշխատանքէն, մինչդեռ այս վերջինները աւելի մեծ սպառնալիք կը ներկայացնեն:

«Նիւ ետրք Թայմզ» թերթը երէկ, նշելով ամերիկեան վարչակարգի բարձրաստիճան պաշտօնատարներ, յայտնած է, որ Սպիտակ Տունը Իրաքի մէջ ամերիկեան գլխաւորութեամբ զինուորապետի շեղէ ահաբեկչա-

Շար-ը՝ էջ 10

ԱՔՍԱ ՄՁԿԻԹԻՆ ՇՈՒՐՁ՝ ԲԱԽՈՒՄՆԵՐ



Պաղեստինցի երիտասարդներ կը քարկոծեն իսրայէլեան հրասայլը

Իսրայէլեան ոստիկանութեան եւ պաղեստինցիներու միջեւ բախումներ ծալը տուած են երէկ, մինչ պաղեստինցիները կը փորձէին երուսաղէմի Հիւն Քաղաքին մէջ իսլամութեան ամէնէն սուրբ վայրերէն մէկը հասնիլ՝ հակառակ իսրայէլեան արգելքի մը:

Շուրջ 200 երիտասարդ պաղեստինցիներ փորձած են անցնիլ Հիւն Քաղաքին Առիւծի Դրան պատնէշէն՝ հասնելու եւ աղօթելու համար Աբսա մզկիթին մէջ, սակայն բախումներէ ետք անոնք ետ մղուած են ոստիկանութեան կողմէ:

Ըստ ոստիկանութեան մէկ բանբերին, ձերբակալութիւններ կ'ստանան արձազրուած:

Ան ըսած է, թէ իշխանութիւնները առժամաբար մզկիթ մուտքը արգելած են 40 տարեկանէն վար տղամարդոց,

«զաղտնի տեղեկութիւններու լոյսին տակ, թէ քաղաքային խռովութիւններ ծրագրուած են այսօրուան աղօթքներուն ընթացքին»:

Պաղեստինցիք կ'ըսեն, թէ բախումները ծայր տուած են ամերիկեան մէկ օրինագրի մատուցումով, որ գորակցութիւն կ'արտայայտէ Երուսաղէմը իր մայրաքաղաքը հռչակող իսրայէլեացիներէն:

● ԹԵ ՀՐԱՆԻ ՄԵՋ, ՀԱՂԱՎԱՐ ԻՐԱՆԻՆԵՐ ԵՐԷՎ ՀԱՆՔԻ ՄԸ ՄԱՍՆԱԿԵԱԾ ԵՆ «ԱՆԿԳԻ ԱՄԵՐԻԿԱՆ, ԱՆԿԳԻ ԻՍՐԱՅԷԼ»:

Պաղեստինցիները մտաւորապէս կ'ապահովուին իսրայէլեան գրաւումին դէմ պաղեստինեան ըմբոստութեան հանդէպ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊԱՅԹՈՒՄ ԶԵՇԵՆԻՈՅ ՄԷՋ

ՄՈՍԿՈՒԱ, 11 (ՌՈՅԹԸՐԸ).- Չէչենիոյ մէկ ոստիկանատան մէջ տեղի ունեցած ոռւմբի մը պայթումը առնուապ իւլած է 23 կոհ՝ մեծամասնութեամբ ոստիկաններ:

Պաշտօնատարներ յայտնած են, թէ ոռւմբը դիտումնաւոր կերպով վետեղուած է հարուածելու համար ոստիկաններու մէկ ժողովը:

Պայթումին յաջորդած են կրակոցներ Մոսկուայի ի նպատակով դիմադրուած ուժերու եւ ըմբոստներու միջեւ:

Պայթումը, Չէչենիոյ մէջ Մոսկուայի համար նորագոյն նահանջն էր, մինչ Ռուսիա կ'ըսէ, թէ շրջանին մէջ սպառնալիքներ կացութիւնը հակակշիռի տակ առած է:

ԱՅԼ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՊԱՏԱՄԵԿԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Հ. Յ. Դ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԻՐԵՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Հ. Յ. Դ. «Սիւնն վրացեան» կեդրոնին մէջ երէկ հանդիպում տեղի ունեցաւ Հ. Յ. Դ. ի եւ Հանրապետութիւն Կուսակցութեան միջեւ: Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ ընկ. Վահան Յովհաննիսեանի եւ Հ. Յ. Դ. Գերագոյն Մարմինի անդամներ Արմէն Ռուստամեանի եւ Արուստ Կարգանեանի հետ տեղի ունեցած հանդիպումը դրական եւ կառուցողական նկատուեցաւ Հանրապետութիւն Կուսակցութեան նախագահ Ալիքսէր Բապեանի կողմէ, որ ըսաւ. «Շատ վճռորոշ շրջանէ պիտի անցնինք եւ ողջունելի է, որ իշխանութեան համակարգին մէջ յօսակերպ ունեցող կուսակցութիւնը կը ներկայանայ ընտրութիւնները ապառ, արդար եւ օրինական ձեւով կատարելու առաջադրանքով»:

Քննարկումներուն ընթացքին Հ. Յ. Դ. ի ներկայացուցիչները ներկայացուցին երկրին մէջ տիրող իրավիճակը, միաժամանակ առաջարկեցին մասնակցիլ ընդհանուր յուշագիրի մը ստորագրման, որուն նպատակը Հայաստանի մէջ արդար ընտրութիւններ կատարելն է: Ալիքսէր Բապեան յայտնեց, որ պատրաստ են ստորագրելու այդ փաստաթուղթը, որովհետեւ ատիկա կը բխի իրենց սկզբունքներէն ու մօտեցումներէն:

Հ. Յ. Դ. ի ներկայացուցիչները երէկ նաեւ հանդիպեցան Հայաստանի Ազգային Ժողովրդավարական Միութեան նախագահ Սեյրան Աւագեանի հետ, որուն հետ արծարծեցին աշխարհ քանի մը օրերուն Հ. Յ. Դ. ի կատարած միջկուսակցական հանդիպումներուն ընթացքին ներկայացուած մօտեցումները՝ Հայաստանի մէջ հանրութեամբ կատարուած եւ յատկապէս յառաջիկայ ընտրութիւններուն ընթացքին օրինակալութեան ու անոնց արդիւնքներու վաւերականութեան ամրագրման հարցերը:

Հ. Յ. Դ. ի ներկայացուցիչները նոյն հարցերը երէկ նաեւ քննարկեցին Ազգային Միաբանութեան Կուսակցութեան ներկայացուցիչներուն հետ: Խնդիրներուն շուրջ համաձայն գտնուելով Հ. Յ. Դ. ի մօտեցումներուն հետ՝ Ազգային Միաբանութիւն Կուսակցութեան նախագահ Արտաշէս Գեղամեան կարեւոր նկատեց նախատեսուող յայտարարութեան մէջ քաղաքական շարք մը գնահատականներու ամրագրումը:

ՆԱԽԱԳԱԿ ԼԱԿՈՒՄԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երեկ նախագահական պալատին մէջ ընդունեց Ուքրաինայի կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Վասիլի Քրիմինը, ներկայութեամբ անոր լիբանանցի պաշտօնակիցին՝ Ապտէլ Ռահիմ Մրատի եւ Լիբանանի մէջ Ուքրաինայի դեսպան Վալերի Ռիլաչի:

Հանդիպումին Քրիմին նախագահ Լահուտի փոխանցեց բերանացի նամակ մը Ուքրաինայի նախագահ Լեոնիտ Բուչմայիչին, որ վերանորոգած էր

նախագահ Լահուտի Ուքրաինա այցելութեան հրաւերը, ինչպէս նաեւ Լիբանան - Ուքրաինա յարաբերութիւնները բարելաւելու անհրաժեշտութիւնը:

Քննարկումի առարկայ դարձան նախագահ Քուլմայի Լիբանան այցելութեան արդիւնքները, ինչպէս նաեւ Լիբանանի եւ Ուքրաինայի կառավարութիւններուն միջեւ արհեստագիտական եւ գիտական մարզերէն ներս համաձայնութիւն մը ստորագրելու հեռանկարները:

Նախագահ Լահուտ պատրաստակամութիւն յայտնեց այցելելու Քրիմի դրուատելով կրթական մարզի ծիրէն ներս Լիբանանեւ Ուքրաինական գործակցութիւնը եւ կոչուողով, որ նման գործակցութիւն ըլլայ նաեւ այլ մարզերու մէջ:

Նախագահ Լահուտի այցելեց Ֆրանսա-Խօս Երկիրներու Կապակցութեան Պէյրութի մէջ յառաջիկայ 18, 19 եւ 20 Հոկտեմբերին կայանալիք Ֆրանսախօս Երկիրներու Վեհաժողովին առնչուած հարցեր:

Նախագահ Լահուտ ընդունեց Լիբանանի գեղեցկուհի Քրիսթինա Սաուայան, որ ձափոնի մէջ շահեցաւ «2002ի միջազգային գեղեցկուհի» տիտղոսը: Հանդիպումին ընթացքին նախագահ Լահուտ եւ Սաուայա փոխանակեցին յուշանուէրներ:

Միւս կողմէ, Ֆրանսախօս Երկիրներու Վեհաժողովէն եօթը օր առաջ նախագահ Լահուտ վեհաժողովի կապակցութեամբ այցելեց «Յենիսիա» պանդոկ եւ «Պիէլ» ստուգելու համար կատարուած աշխատանքները, ինչպէս նաեւ ապահովական միջոցառումները, փրոթոգոլային եւ լրագրողներու յատուկ կարգադրութիւնները:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՏՈՐԻ ՇԱՄՈՒՆԸ

Ուրբաթ, 11 Հոկտեմբերին, Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ վեհաբանին մէջ ընդունեց Տորի Շամունը: Ան եկած էր վեհափառին տեսակէտը ունենալու շրջանին եւ մասնաւանդ Լիբանանի ներքին հարցերուն մասին: Շամուն գնահատանքով արտայայտուեցաւ վեհափառին ունեցած միջազգային գործունէութեան մասին եւ ուղեց ունենալ անոր տեսակէտը լիբանանեան շարք մը իրադարձութիւններուն մասին:

Վեհափառը իր կարգ մը մտահոգութիւնները պարզեց մեծարգոյ հիւրին, շեշտելով Լիբանանի ներքին միասնակամութիւնը անրապնդելու կարեւորութիւնը:

ԶՕՐ. ԼԱՀՈՒՄԻ ԱՆՈՒԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երեկ յայտնեց, որ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի անուամբ մարզական համալիրի հիմնարկէքը տեղի պիտի ունենայ Ֆրանսախօս Երկիրներու Վեհաժողովէն անմիջապէս ետք:

Նախարար Յովնանեան երեկ ընդունեց լիդար լիբանանեան ֆետերասիոնի նախագահ Խալիլ Նահասը, որուն շնորհակալութիւն յայտնեց համալիրին մէջ կառուցուելիք Ռիմպիական լողաւազաններուն մասին ցուցաբերած իր հոգատարութեան համար եւ անոր հետ քննարկեց ֆետերասիոնի առնչուած հարցեր:

Նախագահ Լահուտի այցելեց Լիբանանի քարաքէի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Միշէլ Նաքուլին, որ ստացաւ 12 միլիոն լ. սուրի իբրեւ օժանդակութիւն ֆետերասիոնի ծրագիրներուն:

Նշենք նաեւ, որ նախարար Յովնանեան ընդունեց Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպան Հիւսէյն Տարրարի այցելութիւնը: Քննարկեցան Լիբանան - Եգիպտոս երկկողմանի յարաբերութիւնները:

ԿԻԹԱՌԻ ԱՆՉՆԱԿԱՆ ԳԱՍԵՐ

● Սկսանքներու յատուկ հասցեագրեց: Կեդ. 03-709356:

ԿՈՒՉՈՒԻ

● Հազուատի վաճառուուն մը կարիքը ունի վաճառող օրհորդի մը: 3 տարուա փորձառութեամբ: Դիմել՝ հեռ. 01-249222:

ՍՊՈՒՅՑ ԿԱՐԺԱՐԱՆԻ ԴԻՍՈՒՄՆԵՐԸ՝ 30 ՍԵՊՏԵՄԲԵՐԸ 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը կը տեղեկացնէ, թէ պաշտպանութեան նախարարութիւնը կը յայտարարէ, որ կարիքը ունի ուսանողներու՝ օդային, ծովային եւ ցամաքային շոկատներու համար սպաններ պատրաստելու նպատակով:

Հետեւաբար, բանակի հրամանատարութիւնը կոչ կ'ուղղէ բոլոր այն քաղաքացիներուն եւ բանակային վկայական ստացած են եւ յաջողած՝ առնուազն 12/20 միջինով, եւ կամ այս վերջինին համազօր վկայական մը ունին, դիմելու Սպայից վարժարան՝ 30 Սեպտեմբերէն մինչեւ 26 Հոկտեմբեր 2002:

Հայ քաղաքացիները, որոնք հետաքրքրուած են կրնան դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, «Շաղոյեան» կեդրոն, Պուրճ Համուս: ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

365 ՕՐԵՐԸ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանան օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլար: Տէր եւ տիկին Յարութիւն Զահագեան, իրենց որդւոյն՝ Սեպուհ Զահագեանի տարելիցին առիթով, փոխած հոգեձաշի: 16 Հոկտեմբեր:

«ԱՂԹԱՍԱՐ» ՏՆԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՄ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Չէր ձեռնարկին պաշարին համար պահանջեցէք ԼՕՍԻ «Աղթասար» պահածոները, պատրաստուած առանց քիմիական նիւթերու եւ արեւու բնական ջերմութեամբ՝ ծիրանի, թուզի, բալի (վայի կենսա), նարինջի, դդումի եւ սերկելիի անուշներ, կարմիր պղպեղի (փոշի եւ մածուկ), անճուղիի փոշի, թրուաշներ ու լուկի պահածոներ, եւ այլն:

Փնտռեցէք Spinneys, St. Elie, Marche Sako (Չալիք), Makhlof (Տորա): Mini Market Marash Garo համեմատաբար ներսեայ, (Պուրճ Համուս), ինչպէս նաեւ Փուռ Իշխանեան (Չորաք Էլ Պլաթ) եւ ԼՕՍԻ «Ա. Պուլղուրեան» ընկերաբժշկական կեդրոն, 4րդ յարկ:

Այս վաճառքէն զոյգացած գումարները կը ծառայեն ԼՕՍԻ կրթական - ընկերային ու առողջապահական նպատակներուն:

ԼՕՍԻ ԾՐԱՍՏԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԱՆՄԲՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ 3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 27 Հոկտեմբեր 2002ին Գիտ Խաչի Կիրակին, պիտի տօնախմբուի Ս. Նշան Մայր եկեղեցւոյ անուանակոչութիւնը:

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատաղցու ոչխար նուիրել, եւ կամ մասնակցիլ նիւթական նուիրուի, թող բարի ըլլան կապ պահել քաղաքային տարածքէն քարտուղարութեան, հեռաձայնելով 01-981102/3 եւ կամ տէր հօր 03-885941:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

«ՍԵՊՏԻՄԵՐ ԸՆԿՊՈՋԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՐՏ»

Տէր եւ տիկին Արախամ Արախամեան 100 \$
Տէր եւ տիկին Գրիգոր Արախամեան 100 \$
(Ստանալ նուիրատուն՝ հեռ. 01 - 262668)

ՄԱՀԱԶԴ

Տիար Եփրեմ Մելքոնեան եւ զաւակները՝ Արիկ եւ Ռազմիկ

Տէր եւ տիկին Բիւզանդ Գուրգուբեան
Օրհորդ Ազնիւ Մելքոնեան
Տէր եւ տիկին Անդրանիկ Մելքոնեան եւ զաւակուրէք
Տէր եւ տիկին Վահէ Մելքոնեան եւ զաւակուրէք
Տէր եւ տիկին Կարօ Մելքոնեան եւ զաւակուրէք
Տէր եւ տիկին Յակոբ Գուրգուբեան եւ զաւակուրէք
Տիկին Խոսրովի Պաղտասարեան եւ զաւակուրէք
Տէր եւ տիկին Ներսէս Գուրգուբեան եւ զաւակուրէք
Տէր եւ տիկին Մելքոն Մելքոնեան եւ զաւակուրէք
Տիկին Ալին Քէչեճեան
Քենտրոնեան ընտանիք
Քէօճեճեան ընտանիք
Ճուլֆայեան ընտանիք
Շէմէսեան ընտանիք

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, դստեր, քրոջ, մօրաքրոջ եւ հարազատի՝

ՍԻԼՎԱ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ (ՇՈՒՄԵՆՆԻ ԳՈՒԶՈՒՅԵԱՆ, 1957ԻՆ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 8 Հոկտեմբեր 2002ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ՝ Ուրբաթ, 11 Հոկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուսի Ազգ. կերպամաստունը:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահալու:
● Ցաւակոյրութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Մար եուսէֆ, Ուրբաթ 11, Շաբաթ 12 եւ Կիրակի 13 Հոկտեմբերին (ժամը 9-12 եւ 17-21)

ԹՈՔԻՈՅԻ ՄԵՉ ՀԱՐԻՐԻ - ՔՈՅԶՈՒՄԻ ԽՈՐՀՐԳԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ



Վարչապետներ՝ Հարիրի եւ Քոյզումի

Վարչապետ Ռաֆիք Հիմիդի երեկ ճաշի ժամին ընդունեց Պուրճ Համուսի Կրթութեան Կոմիտէի նախագահ Կարէմ Կարէմը:

Թոքիոյի մէջ կայացած հանդիպումին ներկայ էին ելեմուտքի նախարար Ֆուատ Սիմիոն, ճաշի ժամին մէջ Լիբանանի դեսպան Ժամալ Զարը՝ էջ 10

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ

Համազգայինի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը
Շաբաթ 4
Եւ
Երկուշաբթի 6
Յունուար 2003

ՎԱՐՉՈՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

● Պուրճ Համուս, Սամբոր ԱՐԻՆԻ դիմաց, 20 քառ. մետր + վերնայարկ: Կեդ. 03 - 737778 եւ 04 - 531852 (երեկոյեան):

ՎԱՐՉՈՒ ՅԱՐԿԱՔԱԺԻՆ

● Պուրճ Համուս, Արմենիա պողոտայ, Քաղաքապետարանի մօտ, Ա. յարկ, գրասենեակի կամ դարձնաճաշան յարմար: Կեդ. 01 - 256015:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐԱՍՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ՝ Մշակոյթի նախարար **ՂԱՍՍԱՆ ՍԱԼԱՄԻԻ**

Կը ներկայացնէ Հայրենի տաղանդաւոր եւ միջազգային դաշնակախար **ԱՐՄԷՆ ՊԱՊԱԽԱՆԵԱՆ**

Երեքշաբթի, 29 Հոկտեմբեր 2002, երեկոյեան ժամը ճիշդ 8:30ին, Ա. Ս. Բ.Ի ASSEMBLY HALL-ին մէջ:

● Տոմսերը ստանալ՝ Sodeco Square, Համազգայինի գրախանութ («Շաղոյեան» կեդրոն), «Լեւոն Շամբ» կեդրոն եւ ելոյթի օրը կիշէն:

Բարձր Հովանաւորութեամբ Երիտասարդութեան եւ Մարմնակրթութեան Նախարար ՏՈՔԹ. ՍԵՊՏԻՄԵՐ ԸՆԿՊՈՋԵԱՆԻ Կազմակերպութեամբ

Հ.Յ.Գ. ԶԱԲԱՐԵԱՆ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԾԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԳԷՍ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 2 Նոյեմբեր 2002ին, երեկոյեան ժամը 9:00ին, Metropolitan Palace դահլիճի «Dubai Hall» ճաշարանին մէջ. Հըրշ Թաղթ:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

Այսօր, կէսօրուան ժամը 1:00ին, կրնաք լսել **ՇԱՄԼԵԱՆ - ԹԱԹԻԿԵԱՆ ԵՒ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ**

Ուսուցիչներուն եւ աշակերտներուն կարծիքները՝ դպրոցական վերամուտի մասին:
● Յայտագրորդ կրկնութիւնը՝ կէսօրը ետք ժամը 4:00ին:

ՈՒՐՅԱՅԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ 3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ուրֆայի Հայրենակցական Միութիւնը կը յայտարարէ իր հայրենակիցներուն, թէ 2002 - 2003 տարեշրջանին կարիքաւոր սաներու դպրոցական նպաստ պիտի տրամադրուի: Արձանագրութեան համար դիմել ամէն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00էն ետք:

Դիմողները պետք է իրենց հետ բերեն մէկ լուսանկար եւ անձնաթուղթի պատճենը:

ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ

Ազգային Սեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի մէջ հաստատուած ժողովրդային գրադանը թուականէ սկսեալ մինչեւ 30 Յունիս բաց է եւ ամէն տարիքի ընթերցողներ կ'ընդունի, ամէն օր ժամը 10:00էն 8:00, իսկ Շաբաթ օրերը ժամը 9:00էն 12:00:

ՏՆՕՒՆՈՒԹԻՒՆ

ՄԱՀԱԶԴ

Տիար Յակոբ Զոփուրեան եւ զաւակուրէք Տիար Մանուկ Զոփուրեան Տիկին Արշօ Քէօշկէրեան

Լահուր ընտանիք
Թաշեան ընտանիք
Թէրզեան ընտանիք
Գարանեան ընտանիք
Գուճանեան ընտանիք

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, քրոջ եւ մօրաքրոջ՝

ԶԱՊԷԼ ԶՈՓՈՒՐԵԱՆԻ (ՇՈՒՄԵՆՆԻ ԲԵՕՇՎԵՐԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 10 Հոկտեմբեր, 2002ին, Լոս Անճելէսի մէջ:
● Ներկայ ընդունիլ իբրեւ մահալու:

ՃԱՓՈՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ ՆՈՒԷՐԸ

ԱԶՈՒՆԻԷԻ ԸԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ՝ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԲ

Լիբանանի մէջ բարեփոխական գործունէութիւն ծախելու ծիրէն ներս, Ճափոնի դեսպանատունը մեծազումար նուիրատուութեամբ Ալունիէի Հայ Ազգային Բուժարանը օժտեց շտապ օգնութեան բաժանմունքով:

Կազմակերպութեամբ Հայ Ազգային Բուժարանի խնամակալութեան խորհուրդին եւ հովանաւորութեամբ առողջապահութեան նախարար Սլէյման Ֆրենժիէի, երէկ բուժարանին մէջ տեղի ունեցաւ շտապ օգնութեան բաժանմունքին պաշտօնական բացումը: Հանդիսութեան ներկայ էին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի ներկայացուցիչ Վարդան արք. Տեմիրճեան, Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, ՄԱՀԱԵՄԻ կեդրոնական մարմնի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսեան, առողջապահութեան նախարար Սլէյման Ֆրենժիէի ներկայացուցիչ եւ առողջապահութեան նախարարութեան ընդհանուր տնօրէն տոքթ. Ուալիտ Ամար, գաղթականներու հարցերու նախարար Մարուան Համատե, երեսփոխաններ Եղիա Ճերճեան, Ժան Օղասապեան, Ղաթթաս Խուրի, նախկին նախարար Շահէ Պարունեան, Լիբանանի մէջ Ճափոնի դեսպան Նաթթո Ամարի, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեօ Յովհաննիսեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիեան, Այնճարի քաղաքապետ Մեպուի Սգայեան, հիւանդանոցներու սեփականատէրերն ու տոքթ. Ֆաուզի Ատալայի, ազգային վիճակագրութեան կեդրոնական վարչութեան տնօրէն դոկտ. Մարալ Կիտանեան, հայ եւ իսլամ կղերականներ, լիբանանահայ կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, բժիշկներ եւ հրաւիրեալներ:



Ճափոնի դեսպանը իր խօսքի պահուն



Շտապ օգնութեան բաժանմունքի սեփականները մէկուկ մէջ (Լուսանկարները՝ ՍԹԻՏԻՏԻՕ ԱՇՆԱԿԻ)

պունճեան լոյս յայտնեց, որ շտապ օգնութեան բաժանմունքին իրականացումէն ետք կարելի կ'ըլլայ բուժարանը օժտել նաեւ յատուկ խնամքի բաժինով:

Այս խօսք առաւ դեսպան Նաթթո Ամարի. «Ալունիէի բուժարանին միջոցով Լիբանանի ժողովուրդին մեր ըրած այս փոքր նուէրը հոգեկան մեծ հաճոյք է ինձի եւ իմ երկրիս համար: Այս մէկը տակաւին սկիզբն է մեր գործակցութեան, զոր կ'ուզեմ շարունակել ձեզի հետ», ըսաւ ան:

Խօսք առաւ նախարար Մարուան Համատե, որ մեծապէս դրուատեց դեսպանատան ձեռնարկ կառավարութեան բարեփոխական գործունէութիւնը եւ պայն կարեւոր նկատեց Լիբանանի շտապ օգնութեան բաժանմունքի սեփականները մէկուկ մէջ (Լուսանկարները՝ ՍԹԻՏԻՏԻՕ ԱՇՆԱԿԻ)

Շար.ը՝ էջ 10

ՍԱՀԱՐՈՒԹԻՆ

ՄՐՏԻ ԽՕՍԸ՝ ՊԱՐՈՆ ԳՐԱՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

1970ականներուն՝ պատանի էինք: Գիրքի եւ գրականութեան նկատմամբ պաշտամունք ունեցող անհատ մը միայն կրնայ ըմբռնել այդ օրերուն մեր համետ քաղամասերուն կեանք տուող երկու կամ երեք գրախանութիւններուն արժեքը. գրատուն Գրաճեան իր պատկառելի տեղը ունէր անոնց մէջ:

Մեր պատանիներուն հոգիներուն ծարար յագեցնելու իմաստով՝ գրախանութը շատ կարեւոր էր, այո՛, սակայն ամէնէն աւելի անկարելի է մոռնալ պրն. Գրաճեանը՝ միշտ կոկիկ, քաղաքավար, համբերատար, խորհրդաւոր: Ան ճիշդ էր մեր առօրեային մէջ էր, սակայն արտասովոր երեւոյթ էր եւ իր կեցածքով իսկ շատ քան կը փոխանցէր:

Պիտի թուեմ միայն մէկ պատահար, որ սակայն բաւարար է ամբողջ պատգամ մը փոխանցելու համար:

Պրն. Գրաճեան յաճախ մեզի ուղղութիւն կու տար, թէ ո՛ր գիրքերը պէտք է կարդանք: Օր մը երբ գիրք մը կը փնտռէի, մօտեցաւ, հարցուց խորագիրը եւ ըսաւ, թէ չունի այդ գիրքը, բայց թելադրեց անպայման հարցնել նաեւ գրատուն Նուպարին: Չարմացած՝ նայեցայ իրեն: Շուկայի հասկացողութեամբ՝ պրն. Նուպարը իր մրցակիցն էր, սակայն պրն. Գրաճեան վեր էր շուկայական հաշիւներէ. իրեն համար կարեւորը հայ պատանի մը մղելն էր, որ յաւելեալ ընթերցանութիւն կատարէ:

ԸՆԹԵՐՅԱՍԵՐ ՄԸ Շար.ը՝ էջ 10

Հ. Յ. Դ. ԱԶԱՏԱՄԱՐՏ ԿՈՄԻՏԵՆ Կ ԱՇԽԱՏԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ Ի ԽՆԴԻՐ

Հ. Յ. Դ. Ազատամարտ կոմիտէին երէկ յաջողեցաւ ի մի բերել Էջրեֆիէի Հայ թէ տեղացի պատասխանատուներն ու կողմերը, ի խնդրի շրջանի մաքրութեան եւ կենսոլորտի պահպանման:

Արդարեւ, երկար առեւնէ ի վեր շրջանին բնակչութիւնը մտահոգող եւ նեղացնող հարց մը՝ փողոցներու անկիւնները դիզուած աղբակոյտերու երեւոյթը ժողովի նիւթ դարձաւ եւ որոշուեցաւ անպայմանօրէն խնդիրն գտնել բարոյք լուծում մը:

Հ. Յ. Դ. Ազատամարտ ակումբին մէջ կայացած ժողովը, գոր հրաւիրած էր Հ. Յ. Դ. Ազատամարտ կոմիտէն, գումարուեցաւ ամենայն լրջութեամբ: Ներկայ էին շրջանին տասը թաղապետներ, հայկական եւ տեղական բոլոր դպրոցներուն եւ հիւանդանոցներուն տնօրէնները, առեւտրական խորհուրդներու ներկայացուցիչներ, կուսակցութեան ներկայացուցիչներ եւ պատկան մարմիններ, ընդամէնը՝ 27 պատասխանատու անձնաւորութիւններ:

Ժողովը քննարկեց, թէ ի՞նչպէս կարելի է ձերբազատիլ աղբակոյտերէն: Կազմուեցաւ 5 հոգինոց յատուկ յանձնախումբ մը՝ ներկաներէն, որպէսզի հարցը ուսումնասիրէ եւ յաջող ժողովին ներկայացնէ, առ ի վաւերացում, որմէ ետք առ ի գործադրութիւն: Այս իմաստով կապեր հաստատուած են նաեւ «Սուրբ-Սիմ» ընկերութեան եւ Պէյրութի քաղաքապետութեան հետ:

Ժողովը վաղեջ թաղապետ Նազօ Հապիպեան, իսկ ժողովին բացումը, ինչպէս նաեւ փակումը կատարեցին Հ. Յ. Դ. Ազատամարտ կոմիտէի անդամ ընկերներ: Անոնք շեշտեցին, թէ այս աշխատանքը կը կատարուի ի խնդրի շրջանի բնակչութեան առողջապահութեան եւ կենսոլորտի պահպանման:

Arabic header with religious text and decorative elements.

«Սաֆիր» գրած է, թէ պաղեստինցի մը ինքնուրուական յարձակումի մը համար Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան կողմէ նախագահ ճորճ Պուշի տուած հաւանութեան, պաղեստինցիներուն դէմ շարունակուող շարժումն է Ուսպ-Կանիի հարցին առնչութեամբ տեղի ունեցող վերջին իրադարձութիւններուն վրայ: «Սաֆիր» գրած է, թէ ճորճ Պուշի Բոնկրէսին կողմէ յարձակման լիազօրութիւն ստանալէ ետք կը յայտարարէ. «Իրաքի իշխանութեան օրերը հաշուուած են»:

Թերթը նաեւ նշած է, թէ Մէլուտ Ֆայսալ իշխանը կը յայտարարէ, որ Մէլուտական Արաբիա պատերազմի պիտի չմասնակցի, բայց կրնայ գործակցիլ Իրաքի ապապինման ձգտող ՄԱԿի ճիգերուն:

«Նահար»-ի համաձայն, Պուշի քննկրեականներէն համաձայնութիւն առաւ պատերազմի սկսելու. Իրաքի դիմաց ոչ բանակցութիւններու եւ ոչ ալ ընտրութիւններու առիթ կայ: Ըստ թերթին, Ուաշինթըն մտահոգութիւն կը յայտնէ Սուրիոյ կորիպային ծրագիրներուն մասին. Դամասկոս կը հերքէ եւ կ'ըսէ, որ Սուրիա բառացիօրէն ինքնուրուակաւ կը գործադրէ կորիպային միջազգային գործակալութեան որոշումները:

«Լիւուս» նշած է, թէ ճորճ Պուշի յայտարարեց, թէ Իրաքի իշխանութեան օրերը սկսան հաշուուելու, իսկ Պաղեստին Ուաշինթընը հրաւիրեց պէնթոնոն առնչութեամբ իր ամբաստանութիւնները փաստելու:

«Մուսթաքպալ» գրած է, թէ Ներկայացուցիչներու Տան կողմէ կանաչ լոյս առնելէ ետք, Պուշի շատ յստակ եւ վճռական կերպով սկսաւ խօսիլ քանի մը օրէն տեղի ունենալիք յարձակումին մասին:

Ըստ «Մուսթաքպալ»-ի, Ուաշինթընը իր դեսպանատունները կը պզուշացնէ ահաբեկչական հաւանական գործողութիւններու վտանգէն: Ամերիկացի պաշտօնակալներու լրագրող մը կը գրէ. «Իրաքի դէմ յարձակումը ահաբեկչութիւնը պիտի հասցնէ Միացեալ Նահանգներու արտաքին»:

«Մուսթաքպալ» նշած է, թէ Սուրիայի Պալեստինեան Բոլիս Փաուրլի գրպիտի չմասնակցի, «Փաուրլի իր տերերուն հետ կ'աշխատի այնպէս, ինչպէս անցեալին ձերմակամորթ ձորտերուն քով կ'աշխատէին սեւամորթ ստրուկները»:

«Նահար» նշած է, թէ Ֆրանսական քարիւղատար նաւուն պայթումը ըստ ամերիկացիներուն, Ֆրանսացիներուն եւ ապահովագրական ընկերութեան արտաքին մասին. Դամասկոս կը հերքէ եւ կ'ըսէ, որ Սուրիա բառացիօրէն ինքնուրուակաւ կը գործադրէ կորիպային միջազգային գործակալութեան որոշումները:

«Լիւուս» նշած է, թէ ճորճ Պուշի յայտարարեց, թէ Իրաքի իշխանութեան օրերը սկսան հաշուուելու, իսկ Պաղեստին Ուաշինթընը հրաւիրեց պէնթոնոն առնչութեամբ իր ամբաստանութիւնները փաստելու:

«Մուսթաքպալ» գրած է, թէ Ներկայացուցիչներու Տան կողմէ կանաչ լոյս առնելէ ետք, Պուշի շատ յստակ եւ վճռական կերպով սկսաւ խօսիլ քանի մը օրէն տեղի ունենալիք յարձակումին մասին:

Ըստ «Մուսթաքպալ»-ի, Ուաշինթընը իր դեսպանատունները կը պզուշացնէ ահաբեկչական հաւանական գործողութիւններու վտանգէն: Ամերիկացի պաշտօնակալներու լրագրող մը կը գրէ. «Իրաքի դէմ յարձակումը ահաբեկչութիւնը պիտի հասցնէ Միացեալ Նահանգներու արտաքին»:

«Մուսթաքպալ» նշած է, թէ Սուրիայի Պալեստինեան Բոլիս Փաուրլի գրպիտի չմասնակցի, «Փաուրլի իր տերերուն հետ կ'աշխատի այնպէս, ինչպէս անցեալին ձերմակամորթ ձորտերուն քով կ'աշխատէին սեւամորթ ստրուկները»:

«Նահար» նշած է, թէ Ֆրանսական քարիւղատար նաւուն պայթումը ըստ ամերիկացիներուն, Ֆրանսացիներուն եւ ապահովագրական ընկերութեան արտաքին մասին. Դամասկոս կը հերքէ եւ կ'ըսէ, որ Սուրիա բառացիօրէն ինքնուրուակաւ կը գործադրէ կորիպային միջազգային գործակալութեան որոշումները:

«Լիւուս» նշած է, թէ ճորճ Պուշի յայտարարեց, թէ Իրաքի իշխանութեան օրերը սկսան հաշուուելու, իսկ Պաղեստին Ուաշինթընը հրաւիրեց պէնթոնոն առնչութեամբ իր ամբաստանութիւնները փաստելու:

«Մուսթաքպալ» գրած է, թէ Ներկայացուցիչներու Տան կողմէ կանաչ լոյս առնելէ ետք, Պուշի շատ յստակ եւ վճռական կերպով սկսաւ խօսիլ քանի մը օրէն տեղի ունենալիք յարձակումին մասին:

Ըստ «Մուսթաքպալ»-ի, Ուաշինթընը իր դեսպանատունները կը պզուշացնէ ահաբեկչական հաւանական գործողութիւններու վտանգէն: Ամերիկացի պաշտօնակալներու լրագրող մը կը գրէ. «Իրաքի դէմ յարձակումը ահաբեկչութիւնը պիտի հասցնէ Միացեալ Նահանգներու արտաքին»:

Շար.ը՝ էջ 10

Advertisement for 'la maison du poisson' restaurant, featuring a fish logo and contact information.

Advertisement for IGOL MOTOR OIL FUEL CARD, showing a fuel card and the brand logo.

Large advertisement for FUEL CARD, featuring the text 'ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ' and contact details.

www.mesrobian.com

Ամերիկայի Մեզոբիան Կոլեջի Կոմպյուտերային Կենտրոն

260504

JEWELRY Design
DIAMOND Setting
WAX Molding
GEMOLOGY

HAIR STYLING
MAKE UP

Կարմաբուսակառու
միջև կո գնահատվող
վկայական վարմանը
եստ անիջ

Tele-Video & Radio Repair
Car Electricity & Electronics

COMPUTER
Software & Hardware
INTERNET

խոսք մասշտաբային կրթություն

English
For International Business -
TOEFL - Cambridge
University Certificate
+ 8 osur [bqun]ar

MESROBIAN
TECHNICAL COLLEGE
3 արտոնություն
20 ամսայ
փորձառություն

TICKETING
IATA
Գործի Բաց
Անցագիր
Ուզած երկրորդ մեջ

LCCIEB
Business
Մասնագիտություններ
վկայականը՝ Լոնդոնում

B.T.
Համալսարան
է
Գործ
երկու ընտրություն
մեկ վկայականով

ՄՇԱԿՈՅԹԸ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՄԱԳԻԾԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՆ Է ԵՒ ԻԲՐԵՒ ԱՅԳՊԻՍԻՆ՝ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱԿ

Մեծագույն սերունդի թարգմանական աշխատանքը, որ նաև իբրև շարժում կը բնորոշուի մեր պատմության մեջ, անկիւնադարձային դեր կատարեց մեր մշակույթի եւ ազգային իւրայատուկ դիմագիծի բերելը արդարեւ մեջ:

Պատմաբանական մարզին մէջ թերեւս վերջին խօսքը չէ ըստնա՞ գրեթե գիւտին նախորդած դարերուն հայ մշակույթի դիմագիծին ինքնուրոյնութեան կամ անոր որակական արժէքին մասին: Այս կէտին վրայ սակայն տուեալ հարցը չէ մեր ուշադրութեան կիզակէտը: Այլ այն, որ Մեսրոպ Մաշտոցի սերունդը յաջողեցան նոր որակ մը տալ (մէկ «օքթաւ» բարձր) մեր ժողովուրդի հաւաքական մտածողութեան, ինչպէս նաև իբրև հայ անոր առանձնայատուկ դիմագիծի բերելը արդարեւ գործընթացին:

Ստեղծագործ միտքն է ի վերջոյ, որ մշակութային ժառանգութիւնը կ'ուսուցանէ, նոր ստեղծագործութիւններն են, որոնք քար առ քար կը բարձրացնեն այդ ժառանգութեան շէնքը: Գիրքերու գիւտին յաջորդած մտաւարտապէս 16 դարերու ընթացքին մեր մշակույթը՝ իր բազմաթիւ ճիւղաւորումներով, հսկայաքաղ զարգացում ապրած է բնականաբար: Բագրատունեաց հարստութեան անկումէն (1045) մինչեւ 1918 Մայիս 28, երբ մեր ժողովուրդը զրկուած էր սեփական պետութեան մը պաշտպանութենէն, երբ այս ուղղութեամբ կը բացակայէին բաղադրական-ուժային ազդակները, մեր մշակութային հարստութիւնն էր, որ յաջողեցաւ պահպանել մեր ազգային ուրոյն դիմագիծը:

Ճիշդ է, ինչորոյ առարկայ այս դարաշրջաններուն մեծ եղաւ արտահոսքը Հայաստանէն՝ առարկայական աննպաստ պայմաններու բերումով: Մեր ժողովուրդը ենթարկուեցաւ դանդաղորէն արևմտաբան ըլլալու վտանգին: Ճիշդ է նաև, որ Անիէն եւ Սեբաստիայէն (օրինակի համար) դէպի Լեհաստան կամ Հնդկաստան գաղթած հայութիւնը այսօր անհետացած է մեր իրականութենէն: Միւս կողմէ, սակայն, մայր հողին վրայ ապրած հայութիւնը, շնորհիւ իր մշակութային ստեղծագործ միտքին, յաջողեցաւ շարունակել ստացուած ժառանգութիւն մը հարստացրելու գործընթացն ու այդպիսով նպաստեց իր ինքնութեան պահպանումին: Վճռական ազդակը, որ այդ դարաշրջաններուն որոշեց մեր ինքնութեան հարցը, մշակույթի գործօնը եղաւ:

Մշակույթը միայն հասարակ տեղիք հասկացութիւն չէ, միայն բեմական արուեստ չէ, միայն պարային շարժում չէ, միայն գեղանկար կամ քանդակ չէ, միայն ֆոլքլոր կամ նիստուկաց չէ, միայն լեզու եւ գրականութիւն չէ, այլ այս բոլորին մղում տուող ստեղծագործ միտքն է, որ ինքզինք կը զատորոշէ տուեալ միջավայրէն եւ այդ զատորոշումով՝ պաշտպանական ամուր պարիսպ մը կը հանդիսանայ նոյն ձեւի օտար թափանցումներու դէմ:

Քսանմէկերորդ դարու արհեստագիտական հսկայաքաղ զարգացումը սկսած է սկարացնել եւ մինչեւ իսկ քանդակ ազգերու միջեւ գոյութիւն ունեցող մշակութային պատմէն: Համաշխարհային հանրութիւնը, ազգերու միջազգային ընտանիքը այսօր կը դիմագրաւէ «համահարթեցման» վտանգը, որ կը ձգտի ջնջել իւրայատուկութիւնները, նուազագոյնի իջեցնել տարբերութիւնները, չէզոքացնել առանձնայատուկութիւններու այլազանութիւնը: Հայաստանի առաջին վարչապետ Յովհաննէս Քաջազնունի իր «Ազգ եւ հայրենիք» գործին մէջ, վերլուծելով այլազանութիւններու հասկացութիւնը միջազգային դրուածքին մէջ, օրինակով մը դիտել կու տայ, որ համաշխարհային մշակույթը եւ համայն մարդկութիւնը բան մը պիտի կորսնցնէին, եթէ Շէյքսպիրի կողքին Մոլիէր չուներին, կամ, տարբեր խօսքով՝ միայն Շէյքսպիր կամ միայն Մոլիէր ունենային:

Արհեստագիտութեան զարգացման բերումով հաղորդակցութեան միջոցներու զլխապտոյտ պատճառող արագութիւնը կը սպառնայ համեմատաբար փոքր ժողովուրդներու ինքնուրոյնութեան: Սակայն «երկասրի սուր» հասկացութիւնը կարելի է գործածել... զրակա՞ն ձեւով: Նոյն այդ հաղորդակցութեան միջոցներու արդիականացումը մեզ պէտք է մղէ ոչ թէ կեցելու անոր ճնշումին տակ, այլ՝ մտածելու, որ մեր մշակույթի զարգացումին եւ նուաճումներուն մէջ անհրաժեշտ է նոյն այդ արհեստագիտութիւնը կիրառել: Օրինակի համար, ելեկտրոնիկ յեղաշրջումը պատճառ պէտք է դառնայ, որ մշակութային ժառանգութիւնը ոչ միայն մատենադարաններուն մէջ պահուի, այլ... նոր օրերու ընձեռած արհեստագիտութեամբ ալ աւելի տարածուի եւ ինչու չէ՞ նոր դաշտեր ու նոր մարզեր նուաճէ, նոր գիւտեր ընէ: Երկու տասնամեակ առաջ կարելի չէր երեխաներու գիր-զրականութիւնը տպագրելն անդին տեսնել: Այսօր կարելիութիւն է այդ մէկը: Մօտաւորապէս նոյնքան ատեն մը առաջ կարելի չէր հաշուուած վայրկեաններու ընթացքին կամ, ի հարկին, տեղույն վրայ վերահասու ըլլալ ստեղծագործ աշխատանքի մը ծնունդին: Այսօր կարելի է այդ մէկը:

Մշակույթը ազգային դիմագիծի պաշտպանական ազդակ է: Մեզի կը մնայ 21րդ դարու արհեստագիտութեան ընձեռած կարելիութիւնները օգտագործել՝ զայն ամրապնդելու համար:

«ՄԵՊՈՒԷ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏ» ՃԻՇԴ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՍՍԸ ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒՄ ՄԸ

«Երբ յիշատակս ալ թառամի,
Ա՛հ, այն ատեն ես կը մեռնիմ»
Պ. ԳՈՐԻՆԻՍ

2002-2003 կրթական տարեշրջանը անտող վերամուտը դիմաւորեցինք երկմտութեամբ, կասկածով ու վարանոտ տրամադրութեամբ, որովհետեւ անցնող տարեշրջանը եղած էր յուսահատական, ինչ կը վերաբերի հայ ազգային վարժարաններու տնտեսական-պիտեմական հարցին՝ մասնաւորապէս, եւ հայկական մեր բոլոր վարժարաններուն նոյն տագնապով ընթանալուն՝ ընդհանրապէս:

Մեր ընթերցողները տեղեկ են, թէ «Ազգակ» իր սիւնակները լայն բացաւ նշեալ տագնապը իբրեւ նախատարական հարց ներկայացնելու մեր հանրութեան, որովհետեւ լիբանանահայ ուսումնական կեանքը կը դիմակալէր վտանգաւոր եւ յուսալքիչ պայմաններ, վիճակներ, որոնց իբրեւ հետեւանք փակուեցան վարժարաններ մեր բոլոր համայնքներէն:

Լիբանանահայ գաղութէն սրտցաւ եւ ազգային յանձնառութեան գիտակցութեամբ տոգորուց ազգայիններ ակնց տուին հրապարակային արտայայտութիւններուն, երբեմն սուր, բայց արդար բողոքներուն (առ որ անկ է), լուծումներու մասին մտածեցին տագնապը նուազագոյն տարողութեան հասցնելու, միջոցներ որոնեցին, բայց կարելիութիւնները եւ ազգային ուսումնական մեր կարողութիւնները բեթեւ կշռեցին ծանրակշիռ կացութեան ճեղքին դիմաց: Այսուհանդերձ ազգովին յուսացինք «փրկութեան լաստ»ի մը երեւման:

Այսօր ուրախութեամբ հանրութեան կ'աւետեմ մեր մամուլը, թէ «Յոյսը մեզ չէ խաբած», որովհետեւ տակաւին չէ մտարած ազգային արթնութեան անտեսանելի կրակը, որ պիտի բոցավառի անպայման, որպէսզի կարենանք պահպանել գոյութիւնը մեր գաղութահայ լիբնութեան, իբրեւ սփիւրհայտութեան բարեխոյն սիրտ, մեր կրթական համակարգով ու մեր ազգային շքեղ ու շէն կառոյցներով:

Ուրախութեամբ իմացանք վերամուտի առաջին շաբթուան այս օրերուն, որ լիբանանահայ մեր ազգայիններէն տեւ եւ տիկին Յարութիւն եւ Մանիշակ Տահպագեան եւ որդիք սիրայօժար նուիրաբերումով պիտի օժանդակեն մեր ազգային վարժարաններու կարիքաւոր աշակերտներուն՝ հիմնելով ֆոնտ մը, իրենց վաղամեակի գաւկիճ ու եղբոր հանգուցեալ Սեպուհ Տահպագեանի յիշատակը վառ պահելու դիտաւորութեամբ: Տահպագեան ընտանիքը ամենայն սրտակցութեամբ հետեւած կ'ըլլայ մեր տաղանդաւոր ու վաղամեակի բանաստեղծներէն՝ Պետրոս Իւրերեանի ստեղծագործական մտքին:

«Երբ յիշատակս ալ թառամի,
Ա՛հ, այն ատեն ես կը մեռնիմ»:

Տխուր է մահը եղբրական արկածով մահացած երիտասարդին՝ Սեպուհ Տահպագեանի, որ պատահեցաւ տարի մը առաջ, Պէյրութի մէջ: Հազիւ 25 գարուններ բոլորած Սեպուհ Տահպագեան խոստմնալից երիտասարդ մը եղած էր: Ան իր բարձրագոյն ուսումը ստացած էր Պեյնիքայի մէջ, նախ «Սենթ Անրի» բարձրագոյն ուսումնարանին, ապա «Լուվե Լա Նեովը» համալսարանին մէջ՝ վկայուելով տնտեսագիտութեան եւ քաղաքական գիտութեանց հիշերէն: Բայց նախապէս տարբեր «որոշում» մը տուած էր՝ երիտասարդին կեանքին թելը կտրելով անողորմաբար: Սգաւոր ու վշտահար Տահպագեան ընտանիքը այսօր տրամադրուած է սուգը վերածելու օրհնաբեր յիշատակի՝ յաւերժացնելով սիրելի գաւկիճ յիշատակը, ինչուիքիւն բերելով մեր կարիքաւոր աշակերտներուն: Հանգուցեալին եղբայրները՝ Կոմս, Իշխան եւ Ասպետ Տահպագեաններ, նոյնքան սիրով փարած են իրենց եղբոր յիշատակին, եւ առ այդ կը մասնակցին «Սեպուհ Տահպագեան Կրթական Ֆոնտ»ի նորակազմ վարչութեան աշխատանքներուն՝ նախագահութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեանի:

Մամուլով յայտարարուած է արդէն այս ֆոնտին մասնակցութեան պայմանները՝ հարցարաններու ճամբով, տրամադրելի Ազգային առաջնորդարանէն, տրուած ըլլալով, որ «Ֆոնտ»ը տրամադրելի է միայն ազգային վարժարաններ յանախող կարիքաւոր աշակերտներուն:

Ազգովին կը դիմագրաւենք տնտեսական տագնապ մը: Ամէնքս տեղեկ ենք ու գիտակից տագնապին ստեղծած չարիքին, մեր գաւկիճներուն դէպի օտարացում ուղղուելու վնասակար տրամադրութեան, դէպի ծուլում առաջնորդող «արեւելում»-ին: Այսպիսի անփոքր եւ անտարբերութիւն մատնուող կացութեան մէջ յոյժ օրինակելի ժեսթ մըն է Տահպագեան ընտանիքին բարեբարեբարութիւնը, որմէ հարկ է դասեր քաղել, որովհետեւ մեր գաղութը ունի կարողութիւնը դէպի ինքնաբաւութիւն առաջնորդուելու... Առ սակաւ անշուշտ մեր ցարդ լուսմնացած միւս «ուժին» չէր մասնակցութեամբ:

Մինչ այդ մեր ժողովուրդը պիտի օրհնէ յիշատակը վաղամեակի արժեքաւոր, շնորհալի երիտասարդին՝ Սեպուհ Տահպագեանի:

ՀԱՆՆԳՈՒԽՏ

ԵՐԲ ՍՈՒԳԸ ՅՈՅՄԻ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻ (ՄԵՊՈՒԷ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԱՇՈՒՄԱՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ)

Տարի մը առաջ, մեզմէ յաւելու կը բաժնուի Սեպուհ Տահպագեան: Երիտասարդութեան տարիքը տակաւին անոր թեւակոխած, ուսումնաստեղ, լուրջ, պարկեշտ, հայկական ասանդներուն հաւատարմի խոստմնալից գարուն մը, որ միայն կրճար ծաղկեցնել իր շրջապատը, ժպիտ եւ ուրախութիւն բաշխել, յոյս ներշնչել իր շուրջիներուն:

Երկվայրկեանի մը մէջ սակայն, ճակատագրի դաճաղեղ իր սիրելիներէն բաժնեց Սեպուհը: Անմիջապար մեացին ծնողքն ու ընտանեկան պարագաները, իր ընկերները եւ իր ժպիտով եւ յոյսի ճառագայթով առիճնուող շրջապատը:

Անվերաբարձ իր մեկնումէն տարի մը ետք սակայն, ահա, Սեպուհի անձնացած մարմինէն անոր յոյս կը բխի բոլոր անոնց համար, որոնք մնաւ երիտասարդի մը մէջ կը տեսնէին հաւատք եւ խոստում:

Մտղոք՝ տեւ եւ տիկին Յարութիւն Տահպագեան, ու եղբայրներն ու ընտանեկան պարագաները Սեպուհի յիշատակը չկրցան միայն սուգով վառ պահել, այլ անհրաժեշտ գտան Սեպուհի կեանքը վերադարձնելու արժանիք ու հաւատքը, անոր ապագայի հանդէպ ունեցած յոյսը վերանձիղել այլ տեղ:

Յուզումով, բայց միաժամանակ ուրախութեամբ տեղեկացանք ազգային վարժարաններու յատուկ «Սեպուհ Տահպագեան կրթական ֆոնտ»ի հաստատումին մասին: Լիբանանէն տնտեսական գորացող տագնապէն տուժող մեր ծնողներուն առջեւ, զանազան համալսարանական եւ կրթական ֆոնտներու կարգին կը բացուի նոր կարելիութիւն մը, որպէսզի հայ աշակերտը չզրկուի հայ դպրոցի բարիքներէն եւ հայ մնալու ու իր կեանքը հայօրէն վաստակելու եւ ապրելու բախտաւորութենէն:

Ու արդեօք անիջ ու վե՛ն մը կ'ա՞ր տարաբախտ ծնողքի մը համար իր վաղամեակի գաւկիճ՝ Սեպուհի յիշատակը յաւերժացնելու: Արդեօք այս ձեւով Սեպուհ վե՛րապիտանա՞ցած պիտի չըլլայ հայ դպրոցի մէջ հարիւրաւոր հայ աշակերտներու կայծկիտող աչքերուն ընդմէջէն:

Անոնցմէ թերեւս ոչ ոք Սեպուհի ճանձնալու առիթը ունեցած է: Բայց այս ձեւով անոնք առիթը պիտի ունենան օգտուելու անոր հաւատքի բարիքէն ու անոր ծնողներուն գիտակից վերաբերումէն եւ հայատրոփ սրտէն:

Ինչքան գօտեպնդիչ է երեւոյթը եւ ինչքան դաստիարակիչ: Տխուր առիթով մը, քաջութեամբ մահը կոխկոտելու եւ իր իսկ գաւկիճ դամբարանէն զարնանային ծաղիկով մը ուրախութիւն սփռելու արի կեցումը մը, որ միայն գնահատանքի կրնայ արժանանալ:

Ու դեռ մեր մտածումը կ'երթայ այն իրողութեան, որ արդէն իսկ մեր ժողովուրդի երախտագիտական ասանդութեան մէջ բազում բարեբարեբար կարգին դեռ կ'աւելանան նորերը, որոնք իրենց սուրբ կրնան վերածել կեանքի շարունակականութեան, իրենց սիրելիին կորուստը՝ յաւերժութեան:

Ու թելադրանքը տակաւին տատանող մտքերուն, որոնք իրենց երախտութեան համար կրնան մեծագումար ծախսեր ընել, բայց չմտածել չքատրութեան, հիւանդութեան, դպրոցէն զրկուողներու կամ հայեցիութեան հետաքոյններու տխրութիւնը մեղմացնելու մասին:

Սուգն ու կորուստը յոյս վերածելու՝ Սեպուհ Տահպագեանի ֆոնտ»-ը օրինակ պիտի դառնայ, որպէսզի անա՛ւ ուրախութիւնը բաշխուի:

Մենք կը հաւատանք հայու ոգիին:
Երբեմն թերեւս կը քարանայ հայ սիրտը:
Բայց ցամ ու ուրախութիւնը հաւասարապէս կրնան նոր յոյսերու դուռ բանալ:
Օրինակը վարակիչ է:

3. ԲԱԿԱՐԱՏՈՒԽՆ

PHOTO NERSES

ԱՐԱԳ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՆ - ՈՐԱԿԱՒՈՐ ԼՈՒՍԱԿԱՐՆԵՐ

Չոր ուրախ առիթներու լուսանկարները տպեցէ նոր հասած ԱՐԿԱԿԱՆ DIGITAL մօբայի միջոցով, որակաւոր եւ զանազան չափերով

Ստանձնում՝ 20 վայրկեանէն

Լուսանկարները կ'արձանագրենք CD-ի եւ կամ FLOPPY տիպերով վրայ

Cameraներու ճոխ հաւաքածոյ
պլաններ եւ մզարի շրջաններու ընտիր տեսակաւոր

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը
արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիներով

Պուրճ Ըմնուտ. Զաղաքապետարանի փողոց,
«Սամբը Լին»-ի դիմաց. Հեռ.՝ 01-261858 եւ 01-255992

Հարաւանկալի Բարբարոս
Օնի Հարաւանկ

Հարպոյեան Կեդրոն - Գ. Համուտ
Հեռ.՝ 01-253008

www.hamazkayin.com


ԽՍԲԱԳՐԱԿԱՆ «ԱՄՊԱՐԷԶ»Ի

«ԱԶԳԱԿ»Ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:


ՃՇԳՈՒՄ

Երեքշաբթի, 8 Հոկտեմբերի թիւին 4րդ էջին մէջ լոյս տեսած էր լուր մը Երուզայի մէջ գործող հայկական դպրոցներուն մասին: Այդ լուրին վրայ պէտք է աւելցնել, որ երկրորդական բաժին ունեցող վարժարաններուն շարքին է նաև Համազգայինի Մարտի ճեմարանը:



Գրական Հե

Ս. ՄԵՍՐՈՊՈՒՆ ՏԵՍԻԼԸ



ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Շուրջ 1600 տարի է Վեր, Հոկտեմբեր ամսուան երկրորդ Շաբաթ օրը, հայ ժողովուրդը արդար հպարտութեամբ կը տօնէ այլ ժողովուրդներու տօնացոյցին մէջ գոյութիւն չունեցող ի՞ր օրը՝ Թարգմանչաց Տօնը: Քաղաքակիրթ ազգերու պատմութեան մէջ իրաւամբ եզակի եւ եպարհայտաբան հայտնութիւնը, որ դարձաւ յաղթանակներու գումարով հայ լեզուին պաշտամունքը բարձրացուց ամենաբարձր ոլորտներ եւ իր քաղաքակրթական ու քաղաքական կրկնակ բովանդակութեամբ դարձաւ հայ գրականութեան ինքնուրոյն անկողնակէտ մէկը՝ Մաշտոցի առաջին աշակերտներէն մինչեւ Մեծաքանչի նորագոյն սպասարկուներ:

Հայ լեզուի պաշտամունքին գոյութեան կան բովանդակութիւն ու որակ հաղորդած այս գիտակցութիւնը, որ ազամանդացաւ Մեծն Սուրբին եւ իր սրբանունը աշակերտներուն ամբողջական յանձնարարութեամբ, իրեն կենցարք ուղղութիւն եւ ազգային հոգեմտաւոր մակարդ վարակեց «գիրին գտիչ, կաղապարիչ Մեծ Մաշտոց»ի արժանաւոր ժառանգորդները, որոնք «դէպի աղբիւր լոյս»ին մեկնող հայ լեզուին մէջ գտան գորութեան ու գեղեցկութեան գերագոյն գաղտնիքները: Մեծաքանչի պաշտամունքը, այսպէսով, ստացաւ կրկնակ բովանդակութիւն, երբ հայ գրողներուն համար ան դարձաւ շարունակ դարձաւ ոչ միայն արտայայտչական եղանակներու ծով գանձարան, այլեւ՝ ներշնչման ու լինելութեան անըսպար աղբիւր:

«Խոնձ բարբառէն ասորիին ու հելլենին» հայ հոգին ազատագրած, հայ ժողովուրդի ազգային անհատականութեան ծլարակման, ծաղկման եւ յաւերժացման նուիրական ու պարարտ ենթահողը պահպանած Մայրենիին պաշտամունքը պարագայական որոշում մը չէր: Չեղաւ երբեք: Բոլոր ժամանակներուն եւ տարբեր չի կրնար ըլլալ վաղը նաեւ, որովհետեւ ազգային պետականութեան եւ մեր հաւաքական գոյութիւնը երաշխաւորող կառոյցներէ գուրկ ամենամաշայ ժամանակաշրջաններուն մէջ նոյնիսկ, ընդդէմ մեր գոյութեան սպառնացող ամէն տեսակի այլատերիչ խորշակներուն ու մահապիւն փոքորակներուն՝ հայ լեզուն եղաւ թագ ու բանակ, ինքնապահպանման անփոխարինելի կոտան, գաղափարի գեղը եւ ոգեղէն ամրոց: Անաթ ինչու, դարեր շարունակ, գոյատեւման, վնասկամութեան եւ անսակարկ հաւատքի խորհուրդները հայ գրողը փնտնեց եւ միշտ գտաւ հայ լեզուին մէջ:

Աւելին. քաղաքակրթական բացառիկ գարթօնը մը հանդիսանալով հանդերձ՝ Հայ Գրեթու Գիւրը նախ եւ առաջ եղաւ քաղաքական պայծառ ու յանդուգն արարք մը, որ գոյատեւելու եւ յաղթանակելու ուխտով հոգեգիւնեց իրերայաջորդ սերունդներ ու հայ ժողովուրդի ծոցին մէջ շարունակ հանգանակով ու հնազանդակով՝ ծնունդ տուաւ հայութեան գոյատեւելու հաւատքն ու երդումը դրսեւորած գաղափարապաշտ նորանոր նուիրակներու:

Ազգային արժեքներու գեղը գոյատեւելու այս գաղափարախօսութիւնը, որ նուիրագործուեցաւ Ե. դարուն, քաղաքական իր յաղթագնաց երթին գուհահեռ՝ նաեւ ապրեցաւ մագլցողական մշակութային վերելք, երբ Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Սահակ, Ղազար Փարպեցի, Փաւստոս Բիւզանդ, Եզնիկ Կողբացի, Մովսէս Խորենացի, Յովսէփ Պղնձեցի, Եղիշէ, Կորիւն եւ բազմատասնեակ աշակերտները Ամենասուրբ Սուրբին հիմը դրին մեր ազգային գրականութեան, գայն հարստացուցին օտարներուն վերամկրտեալ հայացեալ գանձերով եւ դասական բիրեղացումի հասցուցին ոճական ու արտայայտչական բազում գիւտերով հարստացած հայ լեզուն: Եւ հայ մարդուն դիմաց սեփական ուղի բացած ու Հայկական Ասկեղարը հրաշակերտած սերունդը ամենայն իրաւութեամբ կոչուեցաւ Թարգմանչաց Սերունդ, որովհետեւ Հայ Տառերու Գիւտը ստեղծագործական փորձաքարին գարնուեցաւ առաջին հերթին թարգմանական գրականութեամբ՝ Աստուածաշունչի անկրկնելի ազգայնացումով:

Աւելին. Աստուածաշունչը եւ այլաշունչ բազում մագաղաթներ հայացուցած Ռակեդարը՝ եւ պիտի շարունակէ մնալ հայ հոգիի ազատագրման ու հարստացման առաջին շարժումը, որուն մասնակցեցան բոլորը անխտիր հոգեւորականէն մինչեւ աշխարհական եւ արքունի ղապէն մինչեւ մտաւորականներ: Ամբողջական մասնակցութեամբ, որուն շնորհիւ Թարգմանչաց Ռակեդարը նաեւ հիմը դրաւ ազգային հաւաքական գիտակցութեան, պատասխանատուութեան այս բարձր որակով յաղթանակներ արձանագրեց գանգաւ մարգերէ ներս եւ իրաւամբ եղաւ գոյատեւման վեմ ու անկրկնաբար, գեղը ու գրահ եւ արի արանց գործերու յանրակական աւանդ:

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

Ս. Մեսրոպ, յանուն Հայ գիրերուն գիւտին, տաժանելի ճանապարհորդութիւններէ, խորընթաց պրպտութիւններէ եւ լուսարարչ զգեստներէ յետոյ, կը վերադառնար օտար աշխարհներէ: Կը վերադառնար ձեռնունայն: Մտած էր արդէն Հայաստանի սահմաններէն ներս, բոլորովին յոգնաբեկ:

Կը գտնուէր ծաղկած լեռնային մը կողին վրայ: Ա՛յ անկարելի էր շարունակել ճանապարհը: Ու գիշերեց այնտեղ: Հոգիին մէջ կը դառնային, իրարու ներհակ ուղղութեամբ, խռովքի անիւներ: Իսկ մտքին մէջ, փեթակ փրկութեան, բազմազան գիրերու պարը կը թռչկոտէր Համադաղներու ոլորտին մէջ:

Խոնջէնքը պարզեւեց սուրբ գիտնականին խոր նինջ, ու մտքին մեղուները Հանգչեցան բլիթներուն գողը, եւ ան քնացաւ արթուն ցանկութեամբ, յանուն Հայ մտաւոր ու անմահական մեղրին:

Իր գլուխը պատկեր էր օրհնութեան ու կ'արտահոսէր անկէ լուսապէտ լուսապսակ մը, որ կը թրթռայ գետնին վրայ եւ արթուն կը պահէր ծաղկները լեռան:

Վերը, երկնակամարին մէջ, կ'ելեւէջէին բազմաթիւ աստղեր ու սուրբին երկնարժան գլխուն վրայ մերթ կը կազմէին թագ:

Մեսրոպին միտքը կը բանէր նոյնիսկ նինջի ժամերուն: Քանզի Հոգիին Հանգիստի պահերուն իսկ՝ միտքը մտքի չուէր: Մարմինը մտած էր Հոգեւոր մէջ, մինչդեռ միտքը կը յորդէր մարմնոյն վրայ:

Գիշերը յառաջացած էր իր գնացքով: Թաւալած էին երկնները, ու աստղերը կ'իյնային եւ կը հեռանային անհունութեան ովկէաններուն մէջ:

Մեսրոպ կը շարժէր, ու շրթներուն վրայ կ'ոտտոտէին միավանկ ձայներ, ինչպէս թռչունները վարդաստանի մը վերեւ:

Ան Հանգիստեալը եւ ունկնդիրն էր անմահական տեսիլի:

Հրեղէն Հրեշտակ մը, երազին մէջ, մարմնորոնի վրայ կ'արձանագրէր լուսատիպ ձայնաւորները Հայ գիրերուն, ու քնարական Հագագով կը հնչէր անուններն ու ձայները, ուսուցանելով վարդապետին:

Մեսրոպի յիշողութեան դափնեծիր տախտակին վրայ կը ցնծային այդ լուսածորան գիրերը, նման Հայկ Համաստեղութեան:

Արթնցաւ Մեսրոպ այդ աստուածաբա, այդ աստուածաշնչ գիրերուն ձեռն ու ձայնը իր մէջ: Արթնցաւ երանութեան ժպիտներով, ինչպէս մարդ մը, որ կ'արթննայ ու կը գիտակցի որ յաղթական է եւ Հարուստ:

Մունկի եկաւ, յանուն այդ նուիրեալ գիրերուն, որոնք կը թրթռային իր յիշողութեան որմերուն վրայ եւ կամարներուն տակ:

Տեսաւ, որ երկնի երեսն ալ նշանակւած է այդ գիրերը, ու նաեւ միւսները, որոնք նորոնջայ աստղերու պէս տարածուած էին Հայկական կապտանոյ գիշերին մէջ:

Ապա, արքայական Արշալոյսը ծագեցաւ, ծիրանի մը Հանգոյն, որուն փէ-

չերէն կը տեղան բազմազունեան գոհարներ:

Եւ ուստի ու տեսաւ գիրերը ամէնտեղ: Լեռան վրայ վերածուած էին ծաղկներու:

Քայեց ու որոնեց միջոց մը, նշանակելու Համար գիրերը, վախճալով որ կ'աներեւութեան անոնք՝ իր յիշողութեան գանձարանէն:

Հասաւ լճակի մը ափը: Ձուկերը դուրս կ'ելլէին լազուարթ ջուրերէն ու կ'աննէին ձեւերը Հայ գիրերուն:

Թափառեցաւ թաւուտի մը մէջ, փնտնելով փետուրն ու թանաքը ու մագաղաթը փոխարինող իրեր:

Իր գանձը չէր կրնար կողոպտուիլ ոչ մէկ յուղկահարէ, սակայն, կրնար ջրամոյն չքանալ յիշողութեան ալբին խաւարին խորը:

Թռչունները կը դայլայլէին ու կը ստանային Հայ գիրերուն ձայնն ու ձեւը, թարմ պահելով յիշողութիւնը սուրբին:

Եւսաւ դուրս թաւուտէն: Առուակը կը հեզէր Հայ գիրերը սիւրբ կը շնչէր ձայնը Հայ գիրերուն, ջրա-

զացքը Հայ գիրերուն անունները տալով՝ կը թնդացնէր մթնոլորտը: Անցան ձիւները, անցան սայլերը, անցան հօտեր, ու բոլորը կը հանէին Հագագները Հայ գիրերուն:

Բնութեան մէջ կը գեղգեղէր գիրերուն Հրաշաձայն Համերգը:

Ու բուրբ մը վրայ, Հայ գիրերը վերածուած կոյսերու, կ'երգէին ու կը պարէին: Այդ պարին Հանգիստեալ էին Աստուած եւ Քրիստոս (Ա. գիրը եւ Բ. գիրը): Երբ համբարձան Գահակալները եւ Գիրերը, Մեսրոպ տեսնուագրեց ու շարունակեց ճանապարհը:

Երբ Համբարձան Գահակալները եւ Գիրերը, Մեսրոպ տեսնուագրեց ու շարունակեց ճանապարհը:

Լսեց օղին մէջ ձայն ճախրի: Արծիւ մըն էր, որ կը սաւառնէր, իր մագլցիները միած միսերուն մէջ գտնան մը. եւ արծիւն ինկաւ փետուր մը...

Սուրբը վերցուց այդ փետուրը: Ապա ինկաւ գառնուկը ժայռերու վրայ: Ապառաժին սուր կողերը արիւնեցին ու մահացուցին գառը:

Բարձրացաւ Մեսրոպ, ու արծիւին փետուրով եւ գառնուկին արիւնով, իր իսկ կուրծքին տախտակին վրայ արձանագրեց Հայ գիրերը:

(Եւ այնուհետեւ Հայ մատենագիրները գրեցին արծիւի փետուրով եւ գառնան արեամբ, այսինքն՝ սեփական արիւնով):

Ու ցնծաց սիրտը սուրբին եւ արիւնը այլափոխուեցաւ լոյսի, եւ անոր գլուխը շողողաց նման պեղծ կանթեղի:

Եւ նզովեց այն տրուպ տխարները, որոնք, օր մը պիտի հեռանան կամ Հրաժարիլ մտադրեն այդ երկնանուէր գիրերէն:

Ամէն Հայորդի ընդունեց իր լոյսը՝ այդ կեդրոնական կանթեղէն:

Առանց այդ կանթեղին երփնագեղ լոյսին Հաղորդութեան՝ ոչ ոք կրնայ Հարագատն ըլլալ Հայութեան:

Արեւելքէն յԱրեւմուտք, բոլոր լոյսերուն մէջ աշխարհի, մեր գիրերուն լոյսն է ամէնէն կատարելալը, քանզի անոր ալը ափին մէջն է Աստուծոյ:

ՆՇԱՆ ՊԵՇԻԿՍԵԱՆ

ՄԵՍՐՈՊԱՇՈՒՆՉ ԲԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ՄԵՍՐՈՊ

Կը բացուի գիրքը հիմա հանդարտօրէն, վեհօրէն, Գրեթն անոր կը հոսին ջրերու պէս յորդառատ Աշուրներուս հունն ի վար, կ'անցնին ներքին

Պաշտերէն, Մերթ դառնալով վտակներ եւ մերթ անանց հեղեղատ:

Վտակներու վազքին հետ կը բարձրանան մրմունջներ, Նարեկացին, Մեծարենցն ու Տէրեանը դաշնային, Սրտերու մէջ անհամար կը բանան նոր գարուններ, Ու յաւերժին կը տանին տառերը մեր լուսածին:

Դեռ կայ հեղեղը կ'օր մեր գրերու յորձանքին, հորեկացին, Վարձանն ու Չարեցը այեկոծ, Որոնք տարին աննուաճ Արարատի գագաթին՝ Ծիածանի պերճօրէն բարբառը մեր մրկաճոծ:

Ժամանակի արշաւն էր դարերէն այ բարձր, Մեր գրերու հոսանքն այս, իր յորդառուի ակունքին՝ Հանձարով Մէսրոպին, բեղմնաւորեց, ծաղկեցուց, Դարձուց ծառ մը խորարատ հողմաճայած հայ հոգին:

ԼԵՒՆ ԳԱՐՄԵՆ

ԳԵՐԵՉՄԱՆ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ

Մարմինն Անոր ցմուտած չէ այս երկրին Կնդրուկներով եւ իղերով, այլ երկնային Գաղտնիքներով, աստ կը հանգչի յաւերժօրէն Վարդակարմիր իր պատանքին մէջ իրեղէն:

Ոսկեճանաչ դագաղի մէջ աղանձաղէ Սրբապատար իսրայէլութեամբ ան կը ննջէ, Եւ յարութիւն կ'առնէ ամէն աղօթքի մէջ՝ Որ հոգիի մը խորհուրդին լոյսն է անչէր:

Սուրբ խօսքի եւ լուրթեան տաղիւն վրայ Հայրագործ իր բապուկները կը բանայ, Որպէսզի մահն ըլլայ պարտն լուսակարօտ,

Եւ մարմնեղէն կերպարանքին կորնչելի Հայաստանի պարտէկներուն մէջ խնկաճող Այլակերպուած Անմահութիւնը դարբնուի:

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԾ

ՄԻԱՅՆ ՄԵՎ ԳԻՐ

Միայն մէ՛կ գիր, հայերէ՛ն գիր՝ Եւ մենք եղանք լոյսէ՛ր կրկիր:

Լոկ մէ՛կ հայ բառ՝ Եւ մենք դարձանք իրաջքի դար՝ Ոսկեբարբառ:

Միայն մէ՛կ էջ՝ Եւ ունեցանք Մէկ օրուան մէջ Լոյսի՛ շափ կեանք:

Միայն գրի՛չ մը հայաշունչ՝ Եւ հայ դարձուց ու խօսեցուց Ան սիրտ մը մունջ:

Լոկ մէ՛կ հայ գիրք մագաղաթեայ՝ Եւ ունեցանք ազգի հսկայ՝ Միտք ու հասակ, Արեւուն տակ Ան՝ն դարձանք:

Միայն Մաշտո՛ց մը - իրա՛ջք մարդ՝ Եւ ունեցանք մենք Արարա՛տ Ոսկեգագաթ:

Միայն մէ՛կ գիր, Գի՛ր Մէսրոպեան՝ Եւ մենք եղանք լոյսի՛ր երկիր - Մե՛ծ Հայաստան:

ԺԱԿ Ս. ՅԱՎՈՐԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆ

Ինչի՞ թարգմանք դու պիտի լինես, Եթէ կորցրել ես բնութեան յեպուն, Եթէ խօսքերն ու բառերը հին են, Եթէ նայում ու ոչինչ չես տեսնում,

Արդեօք ի՞նչ դո՛ւնէր դու պիտի բախես, Արդեօք ի՞նչ գրե՛ր քո քոտի վերժանես, Երբ քո կենցաղն էս քո վզից կախել, Երբ քարի նման օրերդ ծանր են,

Երբ երապի մէջ դու թափառում ես խոյ ու համրերի արքայութիւնում, Թափուր քաղաքում - կոյր ու անուղէշ, Ուր նոյն խօսքերն ու գրերն են, ու նոյն

Բառերն են ծործոր, ներկուած, կանացի, Որոնք չեն տրուել, սակայն, կնութեան, Կեանք է, անտեղի ու բերանացի, Որ ենթակայ չէ, աւաղ, մեկնութեան:

Ու դատարկ խօսքի շքաճանդէսում Որեւէ իմաստ ի կուր մի փնտրիր, Մեկ անըքում է տեղի մի սուտ, Որ մատուցում է իբրեւ ճառընտիր:

20. 10. 2001 ՀՐԱՉԵԱՅ ԹԱՄԲԱՉԵԱՆ

ԻՆՉ ԿՐԵՆ ԿԱՍ ԿՐԵՆ ՓՕԼԻԿԼՕԹ ԲՈՒԷՃԻ ԾՐԱՆԱԿԱՐԱՆԵՐԸ

«... Փօլիկլօթ Բոլիճէն մասնակցեցալ BT3 քննութեանց, Լիբանանի մէջ բարձրագոյն սիւշը պայտնովոր առաջին հիւնգին մէջ էի: Ապա յաջողեցալ նաեւ TS վկայականի քննութեանց: Այժմ կ'աշխատիմ որպէս գլխաւոր հաշուապահ ոսկերչական մեծ ընկերութեան մը մէջ, Պուրճ Համուտ...»:

ԹԱԼԻՆ ՃԱՐԻՔԵԱՆ

